

## ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ Է

Մեզ հասավ զայրացուցիչ լուրն այն մասին, որ հարևան Նախիջևանի ինքնավար հանրապետության տարածքում գտնվող պատմական Հին Ջուղայի գերեզմանատանը ավերումներ են կատարվում, խաչքարերը փոխադրվում են հայտնի չէ ուր... Արաքս գետի ձախափնյա մասում գտնվող հայկական այս գերեզմանատանը (XV-XVII դար), բազմահազար տապանաքարեր, խաչքարեր ու քանդակագարդ խոյեր կան՝ կերտված, տաղանդաշատ հայ վարպետների ձեռքերով: Հիրավի, Ջուղայի գերեզմանատունը պատմագեղարվեստական արժեքավոր կերտվածքների մի կատարյալ թանգարան է բաց երկնքի տակ: Սկզբում մենք չհավատացինք, որովհետև միջազգային օրենքներով դա ընդունվում է որպես բարբարոսություն հանդեպ պատմամշակութային հուշարձանների, իսկ մեղավորները ենթակա են խստագույն պատժի: Ցավոք, պարզվեց, որ ոճրագործությունն իրոք կատարվել է: Մեր հարևանները զուտ օրինակ են որդեգրել իրենց արյունակից թուրքերից, որոնք տասնամյակներ շարունակ բնաջնջել են Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող հազարավոր վանքեր ու եկեղեցիներ, կոթողային հուշարձաններ ու խաչքարեր, նպատակ հետապնդելով հայաթափ եղած տարածքներում իսպառ բնաջնջել գյավուրների (անհավատների), այսինքն՝ հայության հետքերը: Այդ բոլորը կատարվել է քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ: Գնահատման չի արժանացել նույնիսկ այնպիսի միջազգային կազմակերպության կողմից, ինչպիսին ՅՈՒՆԵՍԿՕ-ն է, որի անմիջական պարտականության մեջ է մտնում այդ կարգի հանցագործությունների սանձահարումը: Քանի որ թուրքերն ավերել են ու մարսել, ապա ինչո՞ւ նույնը չանեն նրանց արյունակից նախիջևանաբնակ աղբբեջանցիները, որոնք նույնպես հայաթափ դարձրին Նախիջևանը՝ հին հայկական տարածքը, իսկ հիմա ձեռնարկել են պատմամշակութային ու կրոնական հուշարձանների նողկալի «կոտորածը»: Կատարված բարբարոսության դեմ ձայն բարձրացրին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, տողերիս հեղինակը և ուրիշներ: Ի պատասխան՝ Բաքվի ղեկավար գործիչներից մեկը հանդես եկավ հայտարարությամբ, թե դա հայերի հերթական զրպարտանքն է և Նախիջևանի տարածքում հայկական հուշարձաններ չկան: Իհարկե, կարելի է երդվյալ ազգամուլ լինել, քողարկել կատարված հանցագործությունը, բայց պատմության հարցերում անգիտակ լինելը պատիվ չի բերում: Արդյոք փորձե՞լ է նա աղբբեջաններն ստուգաբանել Նախիջևան անունը: Չէ՞ որ դա հայերեն է և կապված է Նոյ նահապետի թափորի այդտեղ իջևանելու ավետարանական պատմության հետ: Մի՞թե չգիտի, որ Նախիջևանի տարածքում բազմաթիվ հայկական վանքեր ու եկեղեցիներ և այլ նշանակության հուշարձաններ կան, որոնց վրա եղած բազմաթիվ ու բազմաբնույթ հայերեն արձանագրությունները մեր պատմական հիշողության լուռ վկաներն են և գիտական աշխարհին դրանք հայտնի են հրատարակված գրքերով, հիշատակված ճանապարհորդների կողմից և այլն: Պատմությունն անողոք է, կեղծիք չի հանդուրժում: Անձամբ ես՝ տողերիս հեղինակը դեռևս առաջին անգամ աշխարհամարտից հետո, երբ գլխավորում էի հնությունների պահպանության կոմիտեն, մի հանձնախմբի կազմում եղել եմ Ջուղայի գերեզմանատանը՝ այնտեղից հատուկ թույլտվությամբ մի քանի խաչքար Էրմիտաժ և Հայաստանի պատմության թանգարան փոխադրելու կապակցությամբ: Բախտ ունեցա տեղում ծանոթանալ այդ բացառիկ հետաքրքիր բացօթյա թանգարանին: 1987թ. Իրանում եղած ժամանակ (մասնակցում էի Սուրբ

Ստեփանոս-Նախավկա վանք կատարվող ուխտագնացությանը) Արաքս գետի աջ ափից տեսել ու լուսանկարել եմ Ջուղայի գերեզմանատունը: Այդ ժամանակ այն տակավին պահպանված էր: Իսկ այժմ, նույն ափից կատարված մեկ այլ ուսանկար, անվիճելիորեն բացահայտում է կատարված նողկալի բարբարոսությունը...  
Գերեզմանատան մի զգալի տարածք բուլղոզերներով «մաքրված» է, իսկ երկաթգծերին կանգնած են այդ «ավարը» փոխադրող գնացքի մի քանի վագոններ: Այնպես որ, ոչ մի զրպարտություն չկա, լուսանկարը դրա խոսուն վկան է:

**«Տեղեկագիր Հայաստանի շինարարների»,**  
*Երևան, 1999թ.*